

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼՍՅՈՅ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավիճակ» 1960, թ. 7-8, էջ 149)

ծա.) Մաքենեաց խրատները կը գրեն. «Ի տէրունական տօնան դառնան միաբան յատենան երանեն, եւ ասեն զաւուր պատշաճ Աւրհնութիւնն միաբան յատենան». մարգարէականն ու շարականները միացած, ինչպէս ըսաւ վերեւ: Ապա կը յարէ. «Եւ յորժամ աւուր պատշաճի վճարի, ի դասն մըտանեն, եւ աշակերտի դասն սկսանի զհետեակ շարականն. զի դաս առ դաս երգելն է հետեակ շարականն եւ ոչ միաբան տանն», ինչպէս վարդապետը ալ կային անշուշտ, եւ անոնց աղգարարութիւն մ'է այս զիտողութիւնը: Հետեակը ընդհանուր էր բոլոր մեծ տօներուն: 1284ի Աւետարանացոյցը կ'ըսէ. «Պենտակոստէին զիշերն հետեակ շարական զՀամբարձման դերկու աւրհնութիւնն ասա»: 1449ի եւ 1494ի Տօնացոյցները նոյն օրը կը գրեն. «Հետեակ շարական զՀամբարձմանն ասա կամ զչորան (անսովոր) եւ կամ Երրորդութիւն անբաժանելի». եւ 1480ի օրինակը նոյնը կը կրկնէ առանց «չորս»ին: Աւետարանացոյցը միւս տօներուն հետեակ չի նշանակեր. մի' թէ չկային տակաւին: Բայց նոյն Տօնացոյցներն եւ 1438ինը ունին հետեակներ Ծաղկազարդին, Աւագ ուրբաթուն, Համբարձման, Փոխման եւ այլն: Եւ հետանալով Մաքենեաց խրատն, հետեակը առաջ կը դնեն քան Օրհնութիւնը. այսպէս Երկրորդ Ծաղկազարդին կ'ըսեն. «Հետեակ շրկ. Համբարձաւ. Աւրհ. ԴԿ. Մեծափրաշ». Վարդավառին՝ «Հետեակ շրկ. զչորան ասա. եւ յԱւրհնութիւնն» իրենք. խաչվե-

րացին՝ «Հետեակ շրկ. ի ձայնէն. Աւրհ. ԱԶ. Որ գամարատ» եւ այլն:

Ժբ.) Առաջին անգամ Մաքենեաց խրատներուն մէջ կը գտնենք վերջին քարոզներու նախադաս «մաղթանքը» կարճառօտ ձեւովս, «Վասն խաչի քն պատուականի», որ բնականապէս կը լրանայ «Տէր, ընկալ գաղաչանս մեր եւ կեցոյ զմեզ»: Սա յետոյ վերջաբանը պիտի կազմէ յարութեան, մարտիրոսաց ու պահոց ութը մաղթանքներուն, որ նախապէս անդոյ եւ անծանօթ խոսքովի, եւ կազմըւած յետ Մաքենեաց խրատներուն, հաւանօրէն պիտի տեսնէինք 1284ի ժամագրքին մէջ՝ եթէ պակասաւոր չըլլար թուղթերու անկումով: Մովսէս Եղեղացին ալ հրեշտակային փառաւորութենէն սկսելով իր մեկնութիւնը, չմերձեցաւ ասոնց: Բայց կան Օշնի աղօթամատոյցին մէջ, 1319ին (10. 15), որմէ առաջ ալ կային ուրեմն, եւ յետոյ անցան նաեւ Սողոմոսարանին մէջ, իբրեւ մաս Կանոնաց սաղմոսին: Եւ են. «Պահոց՝ Քրիստոս է իմ Աստուած» եւ այլն՝ ութ թուով. «Մարտիրոսաց՝ Բարեխօսութեամբ». եւ Յարութեան՝ Փառք յարութեան քն Տէր»:

Ժգ.) 1284ի ժամագրքը պահելով թօթաժամ վերջին քարոզներէն երկուքը՝ Վասն ուղղելոյն առջեւ կը յաւելու «Եւ եւ խաղաղութեան զՏէր աղաչեսցուք», եւ Վասն գտանելոյ կը թողու ասանց ատոր: Նորութեան եւ անուշադրութեան վերագրելու է այդ տարբերութիւնը, որովհետեւ յաւելուածը կայ Օշնի օրինա-

կին մէջ եւս, եւ չորսին վրայ (6, 8, 10, 15), ուստի քան անկէ կանոնս սկսած:

Մինչ այս քարոզները նախապէս եղանակով կ'երգէին, Մաքենեաց խրատները այժմ կը գանազանեն. տէրունական եւ սուրբերու օրերուն «ի ձայն» զնելով, նոյնպէս պատասխաններն ալ. իսկ պահոց օրերուն՝ «քարոզ եւ Տէր աղորմեայն ի թիւ», նման առաջին քարոզին, ինչպէս տակաւին կը կրկնէ պահոց համար եւ «Սրառք շարականաց քաղելոյ» ԺԶ. դարէն:

1284ի Հարցնացոյցը մեր այս քարոզները կը կապէ աւետարաններու հետ՝ այսպէս. «Ի վերուստ դայ Յովհաննէս. Ի գիշերի՝ Ղուկաս. Ուղղելոյ՝ Մարկոս. Գտանելոյ՝ Մատթէոս»: Իսկ աւետարաններն ութը ձայներու հետ՝ այս կերպով. «Մատթէոս՝ ի ԴԿ եւ ԵԿԿ. Մարկոս՝ ԵԶ եւ ի ԴԶ. Ղուկաս՝ ԵԿԿ եւ ի Վառ. Յովհաննէս՝ ԵԶ եւ ԵԶԶ» (Յաւ. Դ): Կը հետեւի՝ որ հակառակ արդի ոճին՝ Վասն ի վերուստ կցորդուած էր ԱԶի եւ ԳԶի հետ. Վասն ի գիշերի՝ ԱԿԻ եւ ԳԿԻ. Վասն ուղղելոյ՝ ԲԶի եւ ԴԶի. եւ Վասն գտանելոյ՝ ԲԿԻ եւ ԴԿԻ: Այս դասաւորութիւնը հաստատուն կը մնայ մինչեւ ԺԵ. դարու վերջը (Յաւ. Ե. 1, 2), եւ Ս. Ղաղարու թ. 1092 Տօնացոյցը, ԺԷ-ԺԸ. դարու, զեռ կը պահէ քարոզներու եւ աւետարանիչներու նախկին համեմատութիւնը, ինչ որ արժանի է ուշադրութեան: Եւ յետոյ Վասն ի վերուստ պիտի յարի ԴԿԻ եւ ԲԿԻ. Վասն ի գիշերի՝ ԱԶի եւ ԳԶի. Վասն ուղղելոյ՝ ԱԿԻ եւ ԳԿԻ. Վասն գտանելոյ՝ ԲԶի եւ ԴԶի: Այսպէս աւետարաններն ալ պիտի փոփոխեն իրենց կապը քարոզներու հետ, եւ անփոփոխ պիտի մնան ձայներուն հետ:

Ժդ.) Այս շրջանին կը հանդիպինք նաեւ «Թագաւորաց» եւ «Ալեկուիայց» յիշատակութեան Բ. կեղծ Օձնեցիին քով: «Չկնի որոյ (օրհնութեան), կը գրէ, մաղթանք առ երկնաւոր թագաւորն՝ սրբոյն բարեխօսութեամբ զերծանիլ յորոգայթից չա-

րին եւ յաւիտենից տանջանացն, եւ նոցին մասին արժանաւորել». իմաստներ՝ քաղուած մարտիրոսաց քաղաւորներէն: «Իսկ ի յարութեան տեսնն եւ ի տօնա տերունիս զԱլեկուիայն երգել՝ նշանակէ զմիայն օրհնութեան պարապիլն ընդ հրեշտակս, եւ անկարօտ զուրբախօսի (110): Երկու երգերս ալ կան բոլոր Մանրութունքներու մէջ, սկսեալ Հալէպի 1275ի եւ Լոնտոնի 1296ի երեցագոյն օրինակներէն, բաժնուած ութը ձայներու վրայ:

Թագաւորաց կարգն ու մասերը, կոչուած Թագաւոր, Սաղմոս եւ Փոխ, կը գանազանուին ներկայիս հետեւեալ ոճով. փակագծի մէջ դրուած ձայները արդին կը ցուցնեն: Թ. Ողորմութիւն (ԱԿ), Ս. Փրկութիւն (ԱԿ), Փ. Որք զտանջանս (ԱԿ). - Թ. Բարեխաւսութեամբ (ԱԶ), Ս. Մերձ է տէր (ԱԶ), Փ. Որ յաղթող (ԱԶ). - Թ. Բարեխաւսութեամբ (անծանօթ), Ս. Սքանչելի (ԲԶ), Փ. Մի՛ յաւիտեան (անծանօթ). - Թ. Բարեխաւսութեամբ (ԲԶ), Ս. Աստուած փառաւորեալ (ԲԿ), Փ. Մարտիրոսք (ԲԶ). - Թ. Դու եւ Քրիստոս (ԲԿ), Ս. Պատուական (ԳԿ), Փ. Որ շնորհաւ (ԲԿ) եւ Որ պսակդ էք (ԲԿ). - Թ. Չճշմութիւն (ԳԶ, ԳԿ), Ս. Լոյս ծագեաց (ԳԶ), Փ. Հանդիսացեալք (ԳԶ, ԳԿ). - Որք ի խորանս (ԴԶ), Ս. Մերձ է Տէր (ԴԶ) եւ Առ. Ոչ են բանք (ԴԶ), Փ. Նահատակք (ԴԶ). - Թ. Չերեքսրեան (ԴԿ), Ս. Ուրախ լիցին (ԴԿ), Փ. Տաւն է այսաւր (ԴԿ): Հալէպի եւ Լոնտոնի Մանրութունքները համառօտուած են իրենց ցուցակներու մէջ, եւ եւս համեմատութիւնս կազմեցի Ս. Ղաղարու 1313ի օրինակէն: Երկու անծանօթ մասերն են ասոնք. «Բարեխաւսութեամբ սրբոց մարտիրոսացն» մի՛ ընկենուր զմեզ յերեսաց քոց, տէր. այլ կեցոյ զմեզ, փրկիչ, վասն անուանդ քում սրբոյ փառաւորելոյ: - Փ. Մի՛ յաւիտեան մերժեր զիս, տէր, վասն բազում մեղաց իմոց. նորո-

1. Գրչ. թ. 1092 Ս. Ղաղարու:

զենցեղ զիս աջ քո՝ յորժամ զսուրբ քո պսակես, տէր»։ Այս երկու մասերով Թաղաւորները ամբողջ էին. իսկ ասոնց կորսուելովը՝ ԳԶի Թաղաւորն ու Փոխը կը կրկնուին այժմ ԳԶի մէջ, ինչ որ թերութիւն մ'է, ու կ'արժէ կորուստները դարձնել իրենց տեղերը։

Կան նաեւ « Թաղաւորք ապաշխարութեան », սկսեալ Հալէպի հնագոյն օրինակէն, շարթումն հինգ օրերու թիւով, եւ իւրաքանչիւրը կազմուած երեք երեք եռամասն բաժիններէ, յար եւ նման այժմուս։ Օրուան պատկերին բազմաւորութեան նպատակն էր անշուշտ խոստովել յաճախ կրկնութենէ աղուհացից մէջ։ Եւ իսկապէս իւրաքանչիւր բաժին իր երեք տունով եւ Թ. Ս. Փ. սկզբնաղբերով բաւական էր մէկ օրուան, նկատելով որ այդ էր ընդհանուր չափը Մարտիրոսաց Թաղաւորներուն եւ Ալէլուիաներուն եւս։ Իրենց ստեղծումն անկասկած կապուած է ժ. Գ. դարուն հետ, երբ Գիշերային պաշտամունքը ամէնօրեայ դարձաւ, ինչպէս նկատեցինք։ Նաեւ Ալէլուիաները հաւասար են բովանդակութեամբ Մանրութեան քերականութեան և արդի բնագրին միջեւ։ Իսկ կարգով նոյն ձայնի մասերն ամփոփուած են իրարու ներքեւ։ Ալէլուիաները զատ ու փոխերը զատ. այսպէս ԱԶի ներքեւ՝ յը. ծն. եր. խչ. եկ. զազ. եւ ապա փոխերը նոյն կարգով. յետոյ միւս ձայները։ Նոյն ձևով շարուած են Օչինի աղթամատոյցին մէջ ալ (16)։

Ժե.) Գիշերային ընթերցման տեղը՝ Կանոններու մէջէն, ուր էր տակաւին խորովի օրով, այժմ փոխադրուած է այս երկին ետեւ։ Մաքենեաց խորանները կը գրեն. « Յորժամ սկսանին զԱլէլուիա կամ զԹաղաւորն, նստի ընթերցողն ի գերքն եւ տեսանէ, զի մի՛ զթեսցի յընթեանուն »։ Գր. Սկեւռացին յետ ակնարկելու « Ալէլուիային եւ Թաղաւորին » կ'ըսէ. « Իսկ ի ժամ գրոցն աղաչեմ, աղաչեմ ամենայնիւ, զղատացիք եւ բաց զականջսդ ներքին, եւ մի՛ քնոյ եւ ծուլութեան տա-

ցես զքեզ » (415)։ Մովսէս Եղնկացի յիշելով՝ խորովի պէս՝ Լաւորիկեան սահմանը, կը յաւելու. « Իսկ մեք զամենայն սաղմոսս ի մի յարեմք, եւ ի կատարածին (ուստի տեղույս մէջ) կամ հազիւ փոքր ինչ ընթեռնութեամբ, եւ զայն ձանձրութեամբ, եւ կամ բնաւ իսկ չընթեռնութեամբ » (110)։ Անձեւացիին զանգատն է՝ զոր կը յայտնէ սոյն վարդապետը։ Հուսկ 1284ի Աւետարանացոյցն ալ կը յիշէ զայն զրելով թէ « ի զիշերն (Ձատկին) ի կատարման գրոցն մտանեն յեկեղեցին եւ ասեն Հարցն »։ Որով շատ յայտնի է ընթերցման զեռ պահպանութիւնը չափով մը. եւ նոյն տեղը, ընդ մէջ երկու ժամերուն։

Ընթերցման նիւթերն անկասկած նոյն էին անցեալին հետ. զիտելի է՝ որ Սոլոմոնի մշակած Տօնամակն ընդօրինակուած է 1204ին՝ եկեղեցւոյ մէջ կարդացուելու նպատակով։ Յակոբ Ա. կաթողիկոս 1267 թուին պատուէր յղեց առաջնորդներուն կարգաւ Ն. Շնորհալիին ընդհանրական թուղթն « յամենայն կիւրակէի ի վերջին դասն՝ յառաջ քան զՀարցն »²։ Ս. Ղազարու թ. 1186 ձառնարի հաւաքիչը, այս շրջանէս, ինչպէս կը գուշակուի մեծ բոլորգրէն ու հնութենէն, Ստ. Սիւնեցիի մեկնութենէն կոչում ըրած է փոփոխութեամբ, ուր կ'ըսէ. Երկրորդ աւետարանն զատուեաց ունի զաւերինակ եւ զհանդերձելոցն, եւ ստոյգ ցուցանէ մեղաւետարանին զյարութիւն Քրիստոսի, եւ զվէմն՝ ուր եղաւ Տէր մեր»։ Եթէ իւզարերից աւետարանը երկրորդ էր Առաւօտեան պաշտամունքին մէջ, ուրեմն առաջին մ'ալ կար, որ հանդիպելու էր Գիշերային ընթերցումներուն մէջ, ինչպէս հինէն ի վեր ունէին ուրիշ եկեղեցիներն ալ կիրակի օրը, թէպէտ մեր քով յատկապէս չէ յիշուած Կտակարանի անունով։

Ժզ.) Մաքենեաց խորաններն այստեղ ունին ուրիշ նորութիւն մը։ « Զկնի գը-

2. Գրչ. Թ. 1533 Ս. Ղազարու։

րոցն, կ'ըսէ, զարարական յատեանն ասեն. մի շար. գրոցն, մի Աստուածածնին, մի շար. խաչի»։ Գրոցն՝ կ'իմացուի օրուան յիշատակին յարմար։ Իսկ « յատեանն »՝ համարութեամբով հոն։ Երեք շարականներու յիշատակութեան այլ եւս չենք հանդիպիր մինչեւ ժ. Զ. դար, ուր « խորաթ ժամատեղաց կարգաւորութեան », շարադրուած Մաքենեաց խորաններուն վրայ, վերստին կը յիշատակեն զանոնք։ Կարելի է թէ կը շարունակուէին ալ. զէթ անոնց կողմէ՝ որ պահեցին ընթերցումը։

Այս ժամուս վերջին չորս կարճագոյն մաղթանքները, Սաղմոսիւք, Ի Գիշերի, Յերգս օրհնութեան, եւ Գոհութեամբ, նշանակուած Մաղմոսարանին մէջ, իրենց որոշ տեղն ունին հոս։ 1284ի ժամագիրքը զատնք կը կոչէ « Աղաւթք Ալէլուաց եւ Թաղաւորաց », եւ Մարիունին « Նոցին կանոնաց աղաւթանի, որ ասի զկնի Ալէլուին եւ Թաղաւորին »։ Ասոնք անձանթ էին խորովի, որովհետեւ տակաւին չկային։ Չեն յիշուած եւ ոչ Մաքենեաց խորաններէն եւ Օչինի ժամագրէն, որպէսզի համոզուինք՝ թէ նորակերտ էին, եւ զեռ ընդունուած չեն բոլորէն։ Յետոյ սովորական կը դառնան, եւ կան թ. 252, 1445 եւ այլ օրինակներու մէջ։

Ժե.) Կեղծ Յովհան Դամասկացի, զրիշ ժ. Գ. դարու, կ'ամբաստանէր Հայերը՝ թէ « Անցանեն զպատուիրանօքն Քրիստոսի, զի ուսոյց զառաքեալն աղօթել Հայր մեր. եւ նոքա ոչ ի մի աղօթս կարգեցին զսա ասել. կը պահանջէր նախ զայն ըսել հասարակաց աղօթքին մէջ³, ինչպէս ունի յոյն ժամագիրքն ալ, թէ եւ ոչ առաջին կարգին վրայ, թէ՛ սկիզբը եւ թէ վերջը ժամերգութեանց։ Արդարեւ մենք անոր յիշատակութեանը չենք հանդիպիր մեր անցեալ մատենագրութեան մէջ, ուր ընդհանրապէս փաւստոս կ'ականարկէր անոր կիրարկութեան պատարագի մէջ

(224)։ Նոյն պակասը կար նաեւ միւս քրիստոնեաներու պաշտամունքներուն մէջ։ « Վարդապետութիւն ժ. Բ. Առաքելոց կարծուած շարադրութիւնը, գրուած Ա. դարու վերջերը, կը պատուիրէ հաւատացեալներուն՝ ըսել զայն օրն երեք անգամ⁴։ Սակայն առանձնական էր այդ։ Սինայի մենաստանը զիշերային հսկման պահուն հինգ անգամ կը նշանակէ զայն, զնելով վերջինը հինգ մասերուն՝ որոնց կը բաժնէ նոյն պաշտամունքը⁵։ Բայց եւ այդ չի նշանակեր անոր կիրարկութիւնը բոլոր հասարակաց աղօթքներուն մէջ։ Ուրիշ փաստ մ'է իր անսովորութեան՝ Գերունդայի 517ի ժողովին զորքը, որ սահմանեց ըսել զայն Երեկոյեան եւ Առաւօտեան պաշտամունքներուն վերջը. ապացոյց՝ թէ չկար նախապէս. վասնզի եղած բան մը չի պահանջուիր։ Ս. Բենեդիկտոս ալ կրկնեց նոյն սահմանը⁶։

Ուշ մտաւ ուրեմն եւ մեր աղօթքներուն մէջ, ըլլալով կնքումն ժամերգութեան, նման յիշեալ արտաքին օրինակներու։ Այսպէս Մաքենեաց խորանները ասով կ'աւարտեն Գիշերայինը. « Զկնի՛ Հայր մեր որ յերկինս »։ Եւ այլուր (յետ Արեւադային) կու տայ հետեւեալ հրահանգը. « Ի վճարքն յամենայն ժամու՝ որ զՀայր մեր յերկինս ասես, նախ ասա՝ Արեւմեալ տէրն մեր եւ փրկիչն Յիսուս Քրիստոս. եւ ապա՝ զՀայր մեր յերկինս ասա »։ Իսկ ինք զայն նշանակած է Գիշերային, Առաւօտեան, Արեւադայի, ձաշու երեք միացեալ ժամերուն (մի անգամ), Երեկոյին ու Սաղաղականին վերջերը. ըստ որում ձաշու երեք ժամերը միասին կը կատարուէին, եւ միւսները կը միանային կամ կ'անջատուէին իրարմէ, ըստ տօներու. միացման պարագային՝ տէրունական աղօթքը տանելով վերջին ժամուն ծայրը՝ ձաշուն պէս։ Այս ոճին կը հետեւին Օչինի եւ Մարիունի ժամագրքերն ալ, ամէն

3. Լոյս տաւ. 1905, էջ 1113. - 1906, էջ 475։

4. Կարբուլ, ժ. Բ, 2245։

5. Բէռլին, Ա, 183։

6. Անդ, 22, 2253։

պաշտամունքին չզննելով Հայր մերը, այլ ումանց:

Կային որ կը հետեւէին հակառակ դրութեան, տէրունականը կրկնելով նաեւ միացեալ ժամերուն իւրաքանչիւրին վերայ: Այսպէս Յովհաննէս Եղիկացին կ'ըսէ՝ թէ «յամենայն աւուր եօթն անգամ աւսեմք Հայր մեր որ յերկինս ես» (Խրտ. ԺԱ.), եւ եօթն էր պաշտամունքներու սովորական թիւը: Դար մը վերջ Գր. Տաթեւացին նոյնը կը հաստատէր. «յինն անգամ աղօթիցն ի վճարսն զՀայր մեր յերկինս ասել» (Ամբ. 326). որովհետեւ ումանք ինքն անգամ կը ժամերգէին: Վերջը զննելուն պատճառն ալ կու տայ. «Վասն գերապատուութեան՝ կատարումն եւ աւարտ ամենայն աղօթից զայն երգեմք» (Հրց. 634): Իր աշակերտը Թ. Մեծոփեցին՝ իր սրբազրած ժամաղբին մէջ զայն կրկնած է ինք ժամերուն ծայրը: Իր օրինակին կը հետեւին ապա միւսներն ալ: Եւ ոչ մին մինչեւ ԺԷ. դար զայն կը դնէ

աղօթքին սկիզբը, այլ միշտ վերջը: Եւ ըստ Տօնացոյցները՝ որ կը նշանակեն ինչ ինչ տօներու նրբեկոյն պաշտամունքը, Հայր մեր չունին սկիզբը. եւ ոչ տալիսին «Խրատք ժամղ. կարգաւորութեան» ԺԶ. դարուն: Տարագրութեան զիւր ըլլալու է այժմու Հայր մերը ժամերգութեանց առջեւն ալ դնելը, հակառակ եկեղեցւոյ բազմադարեան աւանդութեան, որով ոչ գովելի:

Տէրունական աղօթքն ըսելու կերպն ալ այս էր, ըստ Օշինի ժամաղբին. «Եւ միարան ասեն առ հասարակ ամենեքեան, Հայր մեր որ յերկինս ես» (21): Իմաստն է՝ թէ եղանակաւոր էր, ինչպէս յայտնաբար ալ ըսու վերեւ Տաթեւացին՝ թէ «զայն երգեմք», եւ որ պատշաճ իսկ էր: Եւ կը յարէ՝ թէ այդ պահուն «ոչ միայն զգլուխս բանամք, այլ եւ զձեռս համբառնամք ի վեր» (Հրց. 635):

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԳԱՆ ՀԱՅՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԵՐԵՐԵՐԸ

ԿՈՆԱՍՏԱՆՈՒԹԵՐԴ

Խամսայի մելիքութեան բերդերէն է Կոնասու բերդը. եւ կը գտնուի Հալիճոյի եւ Բեիսի մէջ:

Կոնասու բերդը կը պատկանէր Մելիք Փարսաղաններու, որոնք ըստ ումանց՝ սերած էին Սիւնեաց Զաքիկ իշխանէն. բայց աւելի հաւանական կը թուի մեզի որ աւանդ շառաւիղ ըլլան Ծատիկ Աստուածատուր իշխանին, որ Վրաստանէն եկած եւ հաստատուած էր Ղափանի մէջ:

Այս տոհմին առաջին պատմական անձը կը համարուի Մելիք Փարսաղան Ա. որուն անունով կը կոչուի այս տոհմի երէց

ճիւղը. Մելիք Փարսաղանի յաջորդած է իր որդին Մելիք Պալի կամ Պալասան, որ ունեցեր է երեք զաւակներ՝ Մելիք Փարսաղան Բ, Աստուածատուր իշխան, եւ Շահում կամ Շիլոյ:

Մելիք Փարսաղան Բ. ունեցած է երկու որդի՝ Սաֆրազ եւ Պալի. Աստուածատուր ունեցեր է մէկ զաւակ՝ ԴԱԻԹ ԲԷԿԸ, Ղարաբաղի ազատութեան հերոսը. որ մոռնացած էր եւ յաջորդ չունեցաւ:

Մելիք Փարսաղան Բ. իր աղջիկը ամուսնացուցած էր Շիկահոյցի Վարդեկի որդի Նուպարի հետ: Նուպար, թէպէտ ծագումով աղնուական էր, բայց հսկայ հասակով եւ տիտանական ուժով քաջ

մարդ մըն էր, որ փեսայանալով Մելիք Փարսաղանի, անկէ ստացեր էր Բերդաքար եւ Կոնասու բերդերը, եւ պաշտօն՝ պաշտպանելու Մելիք Փարսաղան Բ. ի հոգիները եւ անոր հիւսիսային սահմանները:

Մելիք Փարսաղան Բ. ի որդին Սաֆրազ, համամիտ չէր որ իր քոյրը կնութեան տրուի Նուպարի, երկու նշանաւոր բերդերով. ուստի երբ իր հայրը իրեն կարեւորութիւն չտուաւ՝ զէնքի զիմեց եւ ուղեց կռիւով առնել Նուպարի ձեռքէն այս երկու բերդերը: Սակայն Սաֆրազ չէր գիտեր իր հօրը նկարագիրը. հօր եւ խօսքի տէր մարդ մըն էր. ուստի զայրացած իր որդւոյն այս յանդգնութեան վերայ, անմիջապէս օգնական զօրք կը զըրկէ՝ Կոնասու եւ միւս բերդերը պաշտպանելու համար. Սաֆրազ չի կրնար զրաւել. եւ իր արժանապատուութիւնը վիրաւորուած զգալով՝ կ'երթայ Պոլիս եւ անկէ կ'անցնի Հնդկաստան, ուր կը տիրանայ մեծ հարստութեան:

Այս եղբայրասպան կռիւներէն զոտած՝ Դաւիթ Բէկ ինքը եւս իր հօր Աստուածատուրի մահէն վերջ կը հեռանայ հայրենի երկրէն եւ կ'երթայ Վրաստան, եւ կը մտնէ Վրաց թագաւորին ծառայութեան մէջ:

Մելիք Փարսաղան Բ. իր այս երկու հօր անկիւններու հեռանալէն վերջ՝ ինքզինքն առանձին կը զգայ. իր քով կը կանչէ Խնձորեակ գիւղի Միւրթարը եւ անոր կը յանձնէ սպարապետութեան պատիւը եւ իշխանութիւնը:

Այսպէս, քանի մը տարի եւս Նուպար եւ Միւրթար, ձեռք ձեռքի տուած, քաջութեամբ կը պաշտպանեն իրենց երկիրը թշնամիներուն դէմ:

Սակայն օրէ օր նոր դժուարութիւններ կը բարձրանան Փարսաղանի դէմ. եւ ահա Զաւար Ղաղլու թուրքերը զօրանալով կը յարձակին Հալիճոյի վրայ եւ կը պաշարեն Կոնասու բերդը. Նուպար տեսնելով որ պիտի չկարենայ երկար դիմանալ այս հորդանին, որ օրէ օր աւելի կը զօրանար,

գիշերանց կը հաւաքէ իր ընտանիքի անդամները եւ կը փախչի Թիֆլիս, բերդին պաշտպանութիւնը յանձնելով գիւղացիներուն: Թուրքերը անպաշտպան տեսնելով Կոնասու բերդը, կը յարձակին եւ կը զըրաւեն. կիները անոնց ձեռքը չիյնալու համար՝ իրենք զիրենք սպարիսպներէն վար կը նետեն: Թուրքերը կը կողոպտեն, կը քանդեն եւ կը հեռանան բերդէն:

Նուպար կը վերադառնայ իր հայրենիքը եւ կը նորոգէ աւերակ բերդը: Սակայն թուրքերը հանգիստ չեն թողուր հայերը եւ շարունակ կը նեղեն, մանաւանդ կռիւի մը մէջ կը սպաննեն Նուպարի կրտսեր եղբայրը՝ Յովհաննէս Բէկը, որ Ծովքը գիւղը գացեր էր՝ իր նշանածին այցելութեան:

Միւրթար սպարապետ կ'ուղէ իր վրէժը լուծել. ուստի Ստեփան Շահումեանի առաջնորդութեամբ հայ զուեղ մը կը զըրկէ, որ Ռանդլան գիւղի ձորը բռնեն. իսկ ինքը ուղղակի կը յարձակի Սիէտլար գիւղին վրայ, որուն երեք հարիւր տուն թուրք բնակիչները սուրէ կ'անցընէ, կ'այրէ գիւղը եւ կը վերադառնայ:

Դաւիթ Բէկ այս ժամանակները Վրաստանէն կը վերադառնայ Ղարաբաղ. Մելիք Փարսաղան Բ. կը համոզէ զինքը որ միանայ իրենց՝ ուսերուն գործակցելու համար: Մելիք Փարսաղան Բ. կը մերժէ միանալ Դաւիթ Բէկին. այն ատեն Դաւիթ կը ձեռքաւորէ զինքը եւ կը բանտարկէ, իր Տէր Աւետիս փեսին եւ Միւրթար սպարապետին հետ:

Մելիք Փարսաղան Բ. տեսնելով որ զըրուի պիտի չկարենայ ելլել Դաւիթ Բէկի դէմ, իր խնամի եւ Վարդաշէն գիւղի իշխող Օհան Իւզլէշի խորհուրդով՝ կը հաշտուի Դաւիթ Բէկին հետ եւ անոր հետ կը գործակցի. եւ շատ մը կռիւներ կը մղէ թուրք արշաւողներու դէմ:

Բայց քիչ վերջ Մելիք Փարսաղան դժբախտաբար իր թշնամիներէն հետապնդ-

1. Ազգագրական հանդէս, ԺԶ, էջ 179: